ԱՐՓԻՆԵ ՄԱՆԱՍՅԱՆ

ԳՈՅՈՒԹԵՆԱԿԱՆ (ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ) ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՖՐԱՆՍԵՐԵՆՈՒՄ

Ժամանակակից լեզվաբանական հետազոտություններում գոյութենական նախադասությունները տարբեր կերպ են սահմանվում, և սա պայմանավորված է գոյության իմաստային դաշտի ինքնատիպությամբ: Շատ դժվար է բնութագրել գոյի իմաստաբանությունը, բացահայտել նրա տարբերակիչ հատկանիշները, քանի որ գոյը որպես իմաստաբանական կարգ գործնականում ներակա է բոլոր ասույթներում՝ չնայած այն երբեմն հանդես է գալիս ասույթի հիմնական իմաստի և երբեմն էլ՝ ֆոնի դերում: Լեզվաբանները տարակարծիք են ինչպես գոյի իմաստային դաշտի ծավալային ընդգրկումների, այնպես էլ գոյութենական նախադասությունների հիմնական գործառույթի տարորոշման հարցում: Սույն հոդվածի նպատակն է տալ ժամանակակից ֆրանսերենում գոյութենական նախադասությունների բնութագիրը և տարորոշել դրանց իմաստային սահմանների ընդգրկումները:

Գոյութենական նախադասությունների վերլուծության հիմնական առանցքը Ա.Վ. Բոնդարկոյի կողմից առաջարկված կարգային իրադրության հասկացությունն է, քանի որ հենց այս հասկացությունն է թույլ տալիս տարբեր բնույթի նախադասություններում հարաբերակցել գոյության իմաստային հատկանիշները իրենց լեզվական առկայացումների հետ:

Գոյութենական իրադրության սահմանման հարցում մեզ համար ելակետային է Ա. Վ. Բոնդարկոյի ու Մ. Դ. Վոեյկովայի հետևյալ սահմանումը. «Գոյութենական իրադրությունը լեզվական տարբեր միջոցներով արտահայտվող տիպային բովանդակալից կառույց է, որն ատաղձվում է գոյութենական դաշտի և իմաստաբանական կարգի վրա և որպես ընդհանուր լեզվական իրադրության մի մաս՝ սերտորեն առնչվում է գոյության և ստացականության իմաստային առկայացման հետ»[1]: Սակայն մեր աշխատանքի հետագա վերլուծություններում լեզվական իրադրության ընդգրկուն բնորոշում տալու համար հիմնվում ենք նաև գոյության հասկացությունը կոնկրետացնող իմաստային այլ հատկանիշների վրա:

Գոյության իմույթը, հետազոտողների մեծ մասի կարծիքով (Ֆ. Կիֆեր, Ե. Վ. Պագուչևա, Ի. Բելլերտ, Գ. Ռեյխենբախ, Բ. Ռասել, Դ. Նուտ, Ն. Դ.

[1] Бондарко А. В. Вступительные замечания // Теория функциональной грамматики. Локативность. Бытийность. Посессивность. Обусловленность. – СПб.: Наука, 1996, с. 53.

Արուտյունովա, Մ. Դ. Վոեյկովա և այլն), որպես ներկա իմաստ, գործնականորեն առկա է իմաստային բոլոր տիպի նախադասություններում: Ուստի բացահայտել բուն գոյութենական իմաստային դաշտի տարբերակիչ հատկանիշները հնարավոր է միայն վերլուծելով այն իրադրությունները, որոնց սահմաններում գոյության իմաստն հանդես է գալիս որպես գլխավոր, հիմնական իմաստ:

Հասկացական մակարդակում գոյութենական նախադասությունների առանձնացման դժվարությունը պայմանավորված է հենց «գոյություն» (existence) հասկացության իմաստային բազմանիստությամբ: Գոյության իմաստային դաշտը ավելի ընդհանրացված պատկերացնելու համար անհրաժեշտ է վերացարկվել առարկաների, երևույթների (այս կամ այն դասի օբյեկտների) գոյության կոնկրետ նկարագրերից: Բուն գոյության իմաստն առկայանում է այնպիսի շարահյուսական նվազագույն կառույցներում, որոնց հաղորդման բովանդակությունը հենց առարկայի գոյությունը կամ չգոյությունն է:

Օր.՝ J'existe. (Jean-Paul Sartre, La Nausne, p.67)

Tu n'existes pas. (Jean-Paul Sartre, Le Diable et le Bon Dieu, p.26)

Pas mieux, pas pis, pas de changement. Pas de douleur. (Samuel Beckett, Oh les beaux jours, p.18)

Նման ասույթները ներկայանում են որպես գոյութենական խորքային կառույցի դրսևորումներ: Հենց նմանատիպ խորքային կառույցներով է վերծանվում ինչպես ասույթի առանձնահատուկ իմաստային գործառույթը, այնպես էլ նրա բաղադրիչների վերաբերային բնույթը: Խորքային կառույցի սահմաններում գոյութենական նախադասությունների վերոհիշյալ կողմերը ներկայացվում են որպես ոչ թե առանձին մասեր, այլ որպես մեկ ամբողջի եզրեր, որոնք սերտորեն առնչվում և լրացնում են միմյանց, և հաճախ, դրանց նկարագիրը տալիս, անդրադառնում ենք նույն հատկանիշին, բայց տարբեր հարթություններով:

Գոյութենական նախադասությունների հիմնական գործառույթի սահմանման խնդրում տարբեր հետազոտողներ որպես ելակետ ընդունում են տարբեր հատկանիշներ: Այսպես, օրինակ, լայն տարածում է գտել Լ. Բեբբիի հետևյալ սահմանումը. *«Գոյութենական նախադասությունների հիմնական գործառույթը ենթակայի վերաբերյալի մասին հաստատումն է»*[2]: Այս սահմանման մեջ կարևորվում է գոյություն ունեցող օբյեկտի վերաբերյալի գոյության փաստը:

Լ. Բեբբիի սահմանմանը շատ մոտ է Ն. Դ. Արուտյունովայի սահմանումը, միայն այն տարբերությամբ, որ լեզվաբանը կոնկրետացնում է ինչպես

[2] Бэббн Л. Порядок слов, падеж и отрицание в бытийных предложениях // Новое в зарубежной лингвистике. Вып. XV. Современная зарубежная лингвистика. – М.: Прогресс, 1985, с. 465.

վերաբերյալի տիպը, այնպես էլ հստակեցնում է տվյալ օբյեկտի (կամ օբյեկտների դասի) տեղայնացումը աշխարհի տարածական դաշտում. *«Գոյութենական նախադասությունները աշխարհում կամ նրա որևէ հատվածում այս կամ այն դասի օբյեկտների գոյությունը հաստատող նախադասություններն են»*[3]:

Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում Մ. Դ. Վոեյտովայի հետևյալ սահմանումը. *«Գոյությունը՝ որպես իմաստաբանական կարգ, արտահայտվում է սուբստանցի (իրական երևույթների կամ առարկաների) գատելիության հաստատմամբ կամ ժխտմամբ»*[4]: Այս սահմանմամբ հեղինակը կարևորում է ոչ միայն սուբստանցի գոյությունը, այլև գոյութենական իրադրության հիմքում ընկած մտագործունեությունը, որով սուբստանցների ամբողջական համակարգում ըստ որակական որոշակի հատկանիշների առանձնացվում, կոնկրետացվում է տվյալ սուբստանցը: Սույն սահմանումն ընդգծում է նաև սուբստանցի որակական որոշյալությունը, քանի որ այն առանձնացնելու, գատելու համար անհրաժեշտ է հիմնվել որոշակի հատկանիշների ամբողջության վրա: Այսպիսով, ինչպես հաստատական, այնպես էլ ժխտական նախադասություններում սուբստանցի առանձնացումը կապվում է նրան որոշակի հատկանիշների վերագրման հետ:

Ըստ Ե. Ա. Ռեֆերովսկայայի սահմանման, գոյութենական նախադասությունների գործառույթը *«մտքի օբյեկտի գոյության կամ պատկանելության մասին հավաստումն է, առանց նրան որևէ հատկանիշ վերագրելու կամ այլ առարկաների հետ ունեցած որոշակի հարաբերություններ բացահայտելու»*[5]: Ե. Ա. Ռեֆերովսկայան, ի տարբերություն վերոհիշյալ լեզվաբանների, սուբստանցը դիտում է որպես մտքի օբյեկտ և որպես նախադասության միջուկ մատնանշում է ոչ թե նախադասության պրեդիկատը, այլ օբյեկտը: Ընդգծելով պրեդիկատի երկրորդային դերը՝ Ե. Ա. Ռեֆերովսկայան հիմնավորում է այն պրեդիկատի տեղեկատվական նշանակության բացակայությամբ: Պրեդիկատի իմաստային դատարկությունը լրացվում է օբյեկտի իմաստային նշանակությամբ՝ մեծացնելով վերջինիս իմաստային կշիռը տեղեկատվական դաշտում: Ասույթի երկու կողմերի իմաստային կշիռների համապատասխան հարաբերակցումը հանգեցնում է ողջ նախադասությամբ գոյության իմակի առկայացմանը:

Գոյության իմաստի բնորոշման բանալին, այսպիսով, նրա տեղեկատվական կառուցվածքի բացահայտման մեջ է: Գոյութենական նախադասու-

---

[3] Арутюнова Н.Д. Бытийные предложения // Русский язык. Энциклопедия. – М.: Большая Российская энциклопедия; Дрофа, 1997, с.57.

[4] Воейкова М. Д. Семантическая вариативность глагольных бытийных конструкций в современном русском языке. Автореферат дисс. ... канд. филол. наук. – Л., 1987, с.15.

[5] Реферовская Е. А. Бытийность во французском языке // Теория функциональной грамматики. Локативность. Бытийность. Посессивность. Обусловленность. - СПб.: Наука, 1996, с.80.

թյունների տեղեկատվական կառուցվածքը ներառում է մի քանի հատկանիշներ. նախադասության իմաստային ուղղվածությունը դեպի գոյություն ունեցող սուբստանցը, գոյություն ունեցող սուբստանցի և պրեդիկատի կապի առանձնահատկությունը, ինչպես նաև այդ սուբստանցի՝ հաղորդակցվողի (լսողի կամ ընթերցողի) գիտակցության մեջ արտացոլման եղանակը: Ի հակադրություն այլ իմաստաբանական կարգերի, գոյութենական նախադասություններում առանցքային, միջուկային դերը վերապահվում է ոչ թե պրեդիկատին, այլ սուբստանցին:

Գոյութենական իրադրության կարևորագույն հատկանիշներից է նախադասության իմաստային ուղղվածությունը դեպի գոյություն ունեցող սուբստանցը: Այս ուղղվածությամբ է պայմանավորված օբյեկտի առանձնացման, կոնկրետացման գործառույթը, թեմա-ռեմային տրոհումը, սուբստանցի որակական որոշյալությունը՝ որպես նրա առանձնացման հնարավորության պայման, և պրեդիկատի տեղեկատվական նվազագույն նշանակությունը: Պրեդիկատի իմաստային դատարկությամբ է պայմանավորված գոյութենական բայերի (verbes d'existence) որպես հանգույց հանդես գալու հանգամանքը, ինչպես նաև անվանական նախադասություններով գոյության իմաստ արտահայտելու հնարավորությունը: Վերջինիս դեպքում սուբստանց ցույց տվող անվանական բաղադրիչը միաժամանակ հանդիսանում է նաև գոյության իմաստակիր և իմաստաբացահայտիչ բաղադրիչ: Գոյութենական իրադրության այս հատկանիշի կարևորությունն առանձնահատուկ նշում է Վ. Գ. Ադմոնին, որը գոյութենական նախադասությունները ներկայացնում է կառույցների մի որոշակի տիպով՝ *«գոյության իմաստ արտահայտող և ուղղական հոլովով դրված գոյականով (միակազմ անվանական նախադասություններ)»*[6]:

Գոյութենական նախադասություններում իմաստային ուղղվածությունը դեպի գոյություն ունեցող սուբստանց ինքնին ենթադրում է առարկայի, երևույթի գոյությունը: Հաղորդակցության նպատակը ապահովվում է գոյություն ունեցող սուբստանցի և պրեդիկատի միջև գոյություն ունեցող առանձնահատուկ կապով: Ընդ որում, կարելի է նշել գոյություն ունեցող օբյեկտի առարկայական ընդհանրական վերաբերությունը՝ որպես գոյութենական նախադասությունների միջուկային տիպի համար պարտադիր հատկանիշ և որպես այս տիպը ձևավորող գործոն:

Օբյեկտի որակական որոշյալությունը սերտորեն առնչվում է սուբստանցի առանձնացման հետ, նրա այն հատկանիշների հետ, որոնց հիման վրա տարորոշվում է եզակի կամ (ավելի հաճախ) որևէ դասին պատկանող օբյեկտը:

---

[6] Адмони В.Г. Типология предложений и логико-грамматические типы предложений // Вопросы языкознания. – 1973 - № 2 - с.56.

Օր՝ Il y a quelques jeunes, - comment regarderaient-ils Chnrubin? (Arthur Rimbaud; Ponsies, p.128)

Առարկաների որոշակի դասին տվյալ օբյեկտի վերաբերության իմաստը մատնանշվում է գոյություն ունեցող առարկայի հոգնակի թվի ձևով կամ եզակի թվի ընդհանրական գործառույթով:

Որակական որոշյալությունը կարող է արտահայտվել տարբեր եղանակներով: Գոյություն ունեցող առարկայի անունն ինքնին ենթադրում է հաղորդակցվողների գիտակցության մեջ իր (առարկայի) մասին որոշակի հստակ ուրվագծված պատկերացման առկայություն, որը կաղապարվում է ինչպես հաստատական, այնպես էլ ժխտական կառույցներով:

Օր.՝ Au bois, il y a un oiseau, son chant vous arrUte et vous fait rougir. (Arthur Rimbaud; Ponsies, p.125)

Որակական որոշակիության արտահայտման համար լրացուցիչ միջոցներ են պահանջվում միայն այն դեպքերում, երբ գոյություն ունեցող սուբստանցն առանձնացվում է նմանատիպ սուբստանցների դասում իր ինքնատիպ որակական հատկանիշներով: Նման ասույթի նպատակն է տեղեկություն տալ որոշակի հատկանիշներով օժտված օբյեկտների խմբի գոյության մասին, մինչդեռ ամբողջ դասինը՝ կանխենթադրվում է:

Օր՝ Il y auraut des gens sans doute pour nous trouver un peu irrnvnrencieux, mais je ne crois pas. (Samuel Beckett, Oh les beaux jours, p.37)

Or, il y a des gens hargneux et joyeux, de faux nlus, puisqu'il nous faut de l'audace ou de l'humilitn pour les aborder. (Arthur Rimbaud; Ponsies, p.125)

Սուբստանցի և պրեդիկատի կապի յուրահատկությամբ է պայմանավորված վերջինիս իմաստային դատարկությունը և իմաստային տեսանկյունից բնութագրված չլինելը: Գոյութենական պրեդիկատները մոտ են ցուցային (դեյկտիկ) լեզվական միավորներին, քանի որ գլխավորապես մատնանշում են գոյություն ունեցող սուբստանցի՝ որպես ինքնություն իրողության առանձնացումը ընդհանուր բազմությունից:

Գոյություն ունեցող օբյեկտի և պրեդիկատի սերտ կապն արտահայտվում է նաև գոյություն/չգոյություն հակադրության հնարավորության մեջ: Վերջինս (գոյ/չգոյ հակադրելու հնարավորությունը) նույնպես մի շարք հետազոտողներ դասում են գոյութենական իրադրությանը բնորոշ հատկանիշների շարքին: Գոյութենական նախադասություններում գոյություն/չգոյություն հակադրությունն առկայանում է բայի միջոցով: Հակադրության ինքնատիպությունը կոնկրետ դեպքում արտահայտվում է նրանով, որ պրեդիկատի ժխտումը

տարածվում է ամբողջ ասույթի վրա, և ի հակադրություն այլ տիպի ժխտական նախադասությունների, չի կարող մասնակի լինել: Գոյութենական նախադասություններում օբյեկտի գոյությունը հաստատվում է ողջ նախադասության բովանդակությամբ, այլ ոչ թե նրա կանխենթադրությամբ: Այս նախադասությունները հաստատում են որևէ օբյեկտի գոյությունը կամ չգոյությունը:

Գոյութենական նախադասությունների հիմնական հատկանիշներից ամենակարևորը՝ գոյություն/չգոյություն հակադրությունը, կերպավորվում է ինքնատիպ շարահյուսական կառույցներով: Սուբստանցի և պրեդիկատի կապով պայմանավորված՝ ժխտական գոյութենական նախադասություններում փոխվում է շեշտադրումը, տեղի է ունենում իմաստային տեղաշարժ և տեղեկատվական ծանրաբեռնվածության վերաբաշխում: Ժխտական գոյութենական նախադասություններում տեղեկատվական ծանրաբեռնվածության առավել մեծ մասն ընկնում է պրեդիկատի վրա՝ օբյեկտի տեղեկատվական կշռի «թուլացման» հաշվին: Ընդհանուր առմամբ, չգոյության իմաստ արտահայտող գոյութենական ասույթները ունեն հակառակ կանխենթադրույթ. կանխենթադրվում է օբյեկտի գոյություն, գոյության հնարավորությունը, հավանականությունը:

Գոյությունը, ինչպես նաև չգոյությունը, բոլորովին չեն առնչվում ժամանակային սահմաններին (բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք հատուկ նշվում են նախադասության մեջ): Գոյության տևականությունը ենթադրում է գոյութենական իրադրությունում վայրկենականության իմույթի բացակայություն: Գոյության տևականությունը բացահայտվում է նաև գոյութենական նախադասությունների պրեդիկատի պաշտոնում հանդես եկող բայերի բառաքերականական առանձնահատկություններով. այս բայերը մեծ մասամբ անկատար կերպի բայեր են (verbes imperfectifs, duratifs):

Գոյության իմաստային դաշտի կարևոր հատկանիշներից է գոյության բնութագրված լինել/չլինելը: Այս հատկանիշի հետ է կապվում գոյութենական նախադասությունների տիրույթի սահմանների որոշման և գոյութենական պրեդիկատի առանձնացման խնդիրները: Այլ կերպ ասած, հիմնվելով գոյության բնութագրված լինել/չլինելու հանգամանքի վրա, կարելի է խոսել գոյության իմաստային դաշտում տվյալ նախադասության՝ գոյութենական նախադասությունների միջուկային թե եզրային (պերիֆերիկ) տիպին պատկանելության մասին: Միջուկային գոյութենական նախադասություններում հաստատվում է գոյությունը՝ որպես այդպիսին, և բացառվում է գոյության որևէ առանձնահատկություն մատնանշող իմաստային բաղադրիչ: «Գոյութենական նախադասությունների իմաստային յուրահատկությունը նրանց հաղորդակցական ուղղվածությունն է միայն դեպի առարկայի գոյության բացահայտումը: Այս տիպի նախադասությունները փաստում են միմիայն միկրո- կամ մակրոաշ-

խարհում սուբստանցի (առարկա, անձ, երևույթ) գոյության մասին, բայց չեն բացահայտում տվյալ նախադասությունների նշյալը (դենոտատ) հանդիսացող իրադրությունը»[7]: Միայն գոյության իմաստային դաշտի միջուկային բայերով կազմված նվազագույն կառույցներն են ունակ արտահայտել նման իմաստ:

Որոշ լեզվաբանների կարծիքով գոյության բնութագրված չլինելու հատկանիշը պարտադիր է գոյութենական իրադրության համար: Այսպես, օրինակ՝ ըստ Կ. Լ. Ռոզովայի *« ... գոյությունը գործողություն կամ գործընթաց չէ ... , և հնարավոր չէ այն բնութագրել ավարտվածության տեսանկյունից ..., գոյությունը հատկանիշ չէ, այն բացարձակ ընդհանրական է գոյություն ունեցող ողջ աշխարհի համար ... և բացակայում է որակական հարացույցում»*[8]:

Տեղեկատվական կառուցվածքային տարրերից են ոչ միայն պրեդիկատը և սուբստանցը, այլ նաև գիտակցության մեջ գոյություն ունեցող սուբստանցի վերարտադրման եղանակը: Սա, նախ և առաջ, ինչպես արդեն նշվել է, մտագործունեություն է: Սուբստանցը հաղորդակցվողի գիտակցության մեջ ներկայանում է մեծ մասամբ գիտելիքի մոդուսի միջոցով: Ինչպես նկատում է Կ. Լ. Ռոզովան, գոյութենական նախադասությունները *«ունեն տեղեկատվական հստակ նպատակաուղղվածություն՝ վերացնել աշխարհի մասին գիտելիքներում գոյություն ունեցող բացերը»*[9]: Երբեմն գոյութենական ասույթները կարող են գիտակցության մեջ բանաձևվել ընկալման մոդուսի միջոցով. գոյությունը այս կամ այն կերպ սահմանափակվում է ընկալվող (պերցեպտիվ) տարածությամբ, և հենց սրանով էլ այն տարբերվում է տեղայնացնող իրադրությունից:

Գոյության կոնկրետացման բացակայության հետ սերտորեն առնչվում է ևս մի հատկանիշ. գոյություն ունեցող առարկայի ակտիվության (նրա գործուն կամ ոչ գործուն լինելու) ոչ էականությունը: Այս կարևոր միտքն ընդգծվում է Ն. Դ. Արուտյունովայի, Ե. Վ. Պադուչևայի և Մ. Դ. Վոեյկովայի մի շարք աշխատություններում: Գոյութենական նախադասությունների իմաստային կիզակետում է գոյություն ունեցող սուբստանցը, և նրա գոյությունը ներկայացվում է չնշույթավորված ձևով: Միջուկային տիպի գոյութենական նախադասություններում հաստատվում է հենց գոյության փաստը, այստեղ էականը սուբստանցի արտացոլումն է հաղորդակցվողի գիտակցության մեջ, իսկ հատկանիշները, որպես երկրորդային, փոխադրվում են հետին պլան: Այսպիսով, գոյության

---

[7] Тихонова В. В. Семантическая структура двусоставных предложений с бытийным значением и ее разновидности // Семантика лексических и грамматических единиц. –М.: МПУ, 1995 – с. 114.

[8] Розова К.Л. Семантическое моделирование бытийных предложений. – Тверь, Тверской гос. ун-т, 1997 – с. 16.

[9] Розова К.Л. Бытийные предложения. Автореферат дисс. ... канд. филол. наук. – Тверь, 1997 – с. 13.

ընդհանրացված իմաստն արտահայտվում է այն նախադասություններում, որոնք տվյալ սուբստանցի գոյության մասին լրացուցիչ հատկանիշներ չեն պարունակում և չեն բնութագրում սուբստանցը որպես ակտիվ:

Գոյութենական նախադասություններում սուբյեկտի շարահյուսական դիրքի և օբյեկտի իմաստային դերի անհամապատասխանությամբ է պայմանավորված նախադասության բաղադրիչներն եզրող լեզվաբանական միավորների ոչ միանշանակ սահմանումը: Լեզվաբանների մեծ մասը նախադասության հաղորդակցական հիմնական բաղադրիչն անվանում է գոյություն ունեցող առարկա կամ օբյեկտ:

Այսպիսով, որպես գոյութենական իրադրության հատկանիշներ կարելի է նշել նախադասության իմաստային ուղղվածությունը դեպի գոյություն ունեցող սուբստանցը և այդ ուղղվածությամբ պայմանավորված նրա որակական որոշյալությունը, գոյություն/չգոյություն հակադրության հնարավորությունը, գոյության տևականությունը կամ ժամանակի մեջ անսահմանափակությունը, նախադասությամբ հաղորդվող գոյության բնութագրված չլինելը, գոյություն ունեցող առարկայի ակտիվության ոչ էականությունը և գոյության իմաստը ներմուծող գիտելիքի մոդուսը:

Գրականություն

Աբայան Է.Ռ. Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Եր.: Երևանի համալս. հրատ., 1981:

Адмони В.Г. Типология предложений и логико-грамматические типы предложений // Вопросы языкознания. – 1973 - № 2.

Арутюнова Н.Д. Бытийные предложения // Русский язык. Энциклопедия. – М.: Большая Российская энциклопедия; Дрофа, 1997.

Бондарко А. В. Вступительные замечания // Теория функциональной грамматики. Локативность. Бытийность. Поссессивность. Обусловленность. – СПб.: Наука, 1996.

Бэбби Л. Порядок слов, падеж и отрицание в бытийных предложениях // Новое в зарубежной лингвистике. Вып. XV. Современная зарубежная лингвистика. – М.: Прогресс, 1985.

Воейкова М. Д. Семантическая вариативность глагольных бытийных конструкций в современном русском языке. Автореферат дисс. ... канд. филол. наук. – Л., 1987.

Реферовская Е. А. Бытийность во французском языке // Теория функциональной грамматики. Локативность. Бытийность. Поссессивность. Обусловленность. - СПб.: Наука, 1996.

Розова К.Л. Бытийные предложения. Автореферат дисс. ... канд. филол. наук. – Тверь, 1997.

Розова К.Л. Семантическое моделирование бытийных предложений. – Тверь, Тверской гос. ун-т, 1997.

Тихонова В. В. Семантическая структура двусоставных предложений с бытийным значением и ее разновидности // Семантика лексических и грамматических единиц. –М.: МПУ, 1995.

Beckett, Samuel Oh les beaux jours, Paris, Les Editions de Minuit, 1996.
Rimbaud, Arthur Ponsies, France, EDDL, 1996.
Sartre, Jean-Paul La Nausne, Paris, Hachette, 1996.
Sartre, Jean-Paul Le Diable et le Bon Dieu, Paris, Hachette, 1996.